ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-360-22.08.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված 1-ին հոդվածով լրացվող 2.1-րդ մաս	**1.** «բովանդակությամբ» բառից հետո լրացնել «2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ մասերով.» բառերը, քանի որ հոդվածում ավելացվում է նոր 2.3-րդ մաս: **2.** 1-ին հոդվածով լրացվող 2.1-րդ մասում՝ «(ընկերության խորհրդի անդամ,» բառերից հետո լրացնել «գործադիր մարմնի անդամ, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի և այլն) մեծ մասի (վերահսկիչ փաթեթ) սեփականատեր) կամ նրա հետ փոխկապակցված անձինք ունեն տնտեսվարողի վատ հեղինակություն:» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Փոփոխությամբ հստակեցվել է իրավաբանական անձանց կառավարման վրա ազդեցություն ունեցող անձանց շրջանակը, մասնավորապես՝ ընկերության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի և այլն) մեծ մասի (վերահսկիչ փաթեթ) սեփականատեր:		
		1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասի 5-րդ կետ	**3.** 1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասի 5-րդ կետը ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «5) այն իրավաբանական անձի վրա կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը, որը նախկինում ունեցել է օդանավ շահագործող վկայական եւ դրա գործողությունը սահմանված կարգով դադարեցվել կամ կասեցվել է տվյալ անձի մեղքով օրենքով եւ Կառավարության որոշմամբ սահմանված թռիչքային անվտանգության ապահովման պահանջները խախտելու հետևանքով:» **Լրացմամբ առաջարկվել է նոր իրավակարգավորում, համաձայն որի՝ տնտեսվարողի վատ հեղինակություն**		

			ունի նաև այն անձը, ում մեղքով՝ խախտելով թռիչքային անվտանգության ապահովման պահանջները, դադարեցվել կամ կասեցվել է նախկինում օդանավ շահագործողի վկայական կրող կազմակերպության վկայականը կամ դրա գործողությունը:		
		1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասի 6-րդ կետ	**4.** 1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասի 6-րդ կետը հանել՝ **քանի որ, նախատեսված կարգավորումը խնդրահարույց է Սահմանադրության 6-րդ եւ 79-րդ հոդվածների տեսանկյունից:**		
		1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասից հետո լրացվող նոր՝ 2.3-րդ մաս	**5.** 1-ին հոդվածով լրացվող 2.2-րդ մասից հետո լրացնել նոր՝ 2.3-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ. «2.3. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են համարվում անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 եւ ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:»:		

			Լրացումը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների ապահովմամբ և բխում է Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներից (որոշակիության սկզբունք): «Ավիացիայի մասին» օրենքում սահմանված չէ «փոխկապակցված անձ» հասկացությունը, ինչպես նաեւ Նախագծի 1-ին հոդվածով «Ավիացիայի մասին» օրենքի 43-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2.1-ին մասի կարգավորման բովանդակությունը չի բացահայտում քննարկվող հասկացությունը:		
2.	***ՀՀ կառավարություն***	2-րդ հոդված	Վերանայվել է 2-րդ հոդվածով Օրենքի 47-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասի համարակալումը՝ «1.1-ին մասով» բառերի փոխարեն լրացվել է «1.2-րդ մասով» բառերը, քանի որ 47-րդ հոդվածում արդեն իսկ առկա է «1.1-ին մաս»	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	3-րդ հոդված	3-րդ հոդվածի մասերի համարակալումը շտկվել է, 1-ին մասից հետո ավելացնել նոր «2-րդ» մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված օդանավ շահագործողի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			վկայականի գործողության ժամկետի երկարաձգման կամ դրա մեջ փոփոխություններ կատարելու մասին հայտի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի պահանջները:» **Ըստ այդմ մասերի համարակալումը փոխվել է:** **Լրացումը բխում է ՀՀ կառավարության 06.08.2015թ. թիվ 963-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 24-րդ կետերի պահանջներից, որոնց համաձայն օդանավ շահագործողի վկայականը (ՕՇՎ) փոփոխվում կամ դրա գործողության ժամկետը երկարաձգվում է կատարվում է դրա տրամադրման նույն ընթացակարգով (ներկայացվում է նոր հայտ և նոր գնահատում): Հետևաբար նախատեսվել է օրենքով առաջարկվող իրավակարգավորումը կիրառել ՕՇՎ-ի գործողության ժամկետի երկարաձգման կամ դրա մեջ փոփոխություններ կատարելու մասին հայտի նկատմամբ:**		